ՋԵՐՄՈՒԿՈՒՄ ՀԻՄՔԸ ԴՐՎԵՑ ՆՈՐ ԵԿԵՂԵՑՈՒ

Մայիսի 15-ին տեղի ունեցավ Ջերմուկում կառուցվելիք եկեղեցու հիմնարկեքը: Նախաձեռնությունը Սյունյաց թեմի առաջնորդ Տ. Աբրահամ եպիսկոպոս Մկրտչյանինն ու Ջերմուկի քաղաքապետինն էին: Նախօրոք համաձայնեցված էր շինարարության տեղը, կատարվել էին առաջին անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքները: Բոլորն անհամբեր սպասում էին բարձրաստիճան հոգևոր հայրերի ժամանմանը: Պահը հուզումնալից էր: Առավել շատ էր հուզվել Վայոց Ձորի հոգևոր հովիվ Տ. Մարտիրոս քահանա Սվետիսյանը: Ցերեկվա ժամը 3-ն էր: Հավաքվել էր հավատացյալ ժողովուրդը, տեղական իշխանության ներկայացուցիչներ, մարզի ղեկավարությունը: Բոլորն անհամբեր սպասում էին: Սիա և սպասված պահը:

Սյունյաց թեմի առաջնորդ Տ. Աբրահամ եպիսկոպոս Մկրտչյանի գլխավորությամբ Ջերմուկ էին եկել Երուսաղեմի Հայոց Պատրիարք Գերաշնորհ Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանը, Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Ձավեն արքեպս. Չինչինյանը, Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանը, Ուկրաինայի հայոց թեմի առաջնորդ Տ. Նաթան եպս. Հովհաննիսյանը:

Հյուրերին քաղաքում դիմավորեցին Վայոց Ձորի մարզպետ Պ. Մանուկյանը, Ջերմուկի քաղաքապետ Ա. Արսենյանը, ղեկավար այլ այրեր: Կիրակնօրյա հոգևոր դպրոցի աշակերտները աղ ու հաց մատուցեցին: Սրբազան Հայրերը օրհնեցին աղն ու հացը և «Հրաշափառ» շարականի հնչյունների ներքո մոտեցան նոր կառուցվելիք եկեղեցու հիմքերին: Տ. Աբրահամ եպիսկոպոս Մկրտչյանը դիմեց հավաքվածներին ու շնորհակալություն հայտնեց, որ այստեղ հոգևոր և աշխարհիկ իշխանավորները միասնաբար են ժողովրդին սրբագործության տանում: «Պետք է սովորենք, որ եկեղեցի կնշանակի բոլոր հավատացյալների հավաքատեղի: Այն մեր հոգևոր տունն է»-, այսպիսի խոսքերով հավաքվածներին դիմեց Երուսաղեմի Հայոց Պատրիարք Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանը:

Ողջույնի խոսքերից հետո տեղի ունեցավ եկեղեցու հիմնարկեքը՝ 16 քարերի օրհնման և օծման արարողությունը, որը կատարեցին Սյունյաց թեմի առաջնորդ Տ. Աբրահամ եպիսկոպոս Մկրտչյանը, Երուսաղեմի Հայոց Պատրաիրք Տ. Թորգոմ արքեպս. Մանուկյանը, Եգիպտոսի հայոց թեմի առաջնորդ Տ. Ձավեն արքեպս. Չինչինյանը, Արգենտինայի հայոց թեմի առաջնորդ Տ. Գիսակ արքեպս. Սուրադյանը: Քավորներ դարձան մարզի և քաղաքի ղեկավարները, հարգված անձեր Ջերմուկ քաղաքից:

Հոգևոր արարողությանը իրենց մասնակցությունն էին բերել Ջերմուկի և Կեչուտի կիրակնօրյա դպրոցների բազմաթիվ աշակերտ-աշակերտուհիներ՝ իրենց ուսուցիչներ Լ. Բաղդասարյանի, Տ. Գրիգորյանի, Լ. Շահնազարյանի ղեկավարությամբ: Նրանց համար սա առիթ էր՝ ավելի մոտիկից ծանոթանալու եկեղեցական արարողություններին և ծեսին:

ԲՈՐԻՍ ՔՈՉԱՐՅԱՆ